«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 4
17.12.2024թ.

1. ՀԱԱՀ ռազմավարական պլանի և գործողությունների պլան-ժամանակացույցի քննարկման վերաբերյալ

Ընդունել ի գիտություն:

2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծրագրերի շրջանակներում ՀԱԱՀ գիտական կազմակերպությունների ու ստորաբաժանումների կողմից 2024թ. ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությունների քննարկման վերաբերյալ

Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակներում 2024թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում ՀԱԱՀ գիտական կազմակերպությունների ու ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությունները և երաշխավորել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու համար (որոշումն ընդունվեց միաձայն).

2.1. ՀԱԱՀ Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղ,

2.2 ՀԱԱՀ Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն մասնաճյուղ,

2.3 ՀԱԱՀ Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղ,

2.4 ՀԱԱՀ Գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրիֆիկացման և ավտոմոբիլային փոխադրումների ԳՀԻ.

- Դաշտավարության և անասնապահության մեքենայացման բաժին,
- Ավտոմոբիլային փոխադրումների բաժին:

3. Հանրապետական մի շարք մարզական միջոցառումներին ՀԱԱՀ հավաքական թիմերի մասնակցության, հաղթանակների և ձեռքբերումների վերաբերյալ

ՀԱԱՀ ռեկտորի պարտականությունները կատարող Հ. Զաքոյանի որոշմամբ, ՀԱԱՀ հավաքական թիմերի մասնակիցներն ու մարզիչը պարգևատրվեցին շնորհակալագրերով:

4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ս.թ. հոկտեմբերի 30-ի թիվ 2042-Ա/2 հրամանի համաձայն հայտարարված «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2025» մրցույթին ներկայացվող հայտի երաշխավորման հարցի վերաբերյալ

Երաշխավորել «Մաթեմատիկական ֆիզիկայում և համաճարակաբանությունում ծագող ոչ գծային ինտեգրալ հավասարումների և դինամիկ համակարգերի անալիզ»

վերնագրով հայտը ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու և «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2025» մրցույթին մասնակցելու համար:

5. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի դրական կարծիքով ՀԱԱՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված հարցերի հաստատման վերաբերյալ

5.1. «Պոմիդորի մշակությունը գրունտային ջերմատանը» գիտամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակման (հեղինակ՝ Գ. Մարտիրոսյան):

5.2. Հաստատել «Պարենամթերքի տեխնոլոգիա» մագիստրոսական կրթական ծրագրում առաջարկվող փոփոխությունները. կենսատեխնոլոգիական մեկ պարտադիր և երկու կամընտրային առարկաների ներմուծում:

5.3. Հաստատել «Ճշգրիտ գյուղատնտեսություն» մագիստրոսական ուսումնական պլանում առաջարկվող փոփոխությունները. որոշ առարկաների կիսամյակային տեղափոխություն:

5.4. Հաստատել Վանաձորի քոլեջի «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» մասնագիտության «Տեխնիկ-կարգավար՝ տրանսպորտում փոխադրումների կազմակերպման և կառավարման (ըստ տրանսպորտի տեսակների)» որակավորմամբ մասնագետների պատրաստման հեռակա ուսումնական պլանը:

5.5. Հաստատել «Անասնաբուժություն» և «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտությունների կրթական ծրագրերը:

6. «ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգ»-ում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ

Հաստատել «ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգ»-ում առաջարկվող փոփոխությունները.

6.1. «ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգ»-ից հանել 2.14 կետը՝ հաջորդ կետերը համարակալելով հաջորդականությամբ:

6.2. «ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգ»-ի 2.16 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «2.15. Ինքնուրույն աշխատանքի հանձնումն ու պաշտպանությունը թույլատրվում է նաև ժամանակացույցով նախատեսված վերահանձնումների շրջանում, պայմանով, որ գնահատականի մուտքագրումը e-Buh համակարգ կատարվի տվյալ առարկայի քննության վերահանձնումից առնվազն 3 օր առաջ»:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՋԱՔՈՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ